ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5 ՄԱՐՏԻ 2025 թ.
№ 3 (1140)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի հերթական նիստը հագեցած օրակարգ ուներ. բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը նախ շնորհավորեց ամսվա հոբելյարներին, հանձնեց դոցենտի և պրոֆեսորի վկայականներ, ամբիոնների վարիչների փակ գաղտնի ընտրություն, գիտական կոչումների հավակնորդների հաստատում, Մանկավարժական համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին զեկուցում, ընթացիկ այլ հարցեր:

Ըստ օրակարգային առաջին հարցի փակ գաղտնի քվեարկությամբ անցկացվեց Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի, Ռեժիսուրայի ամբիոնների վարիչների ընտրություն, որից առաջ Բնագիտական մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Մեժլում Երիցյանը և Մշակութային մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Գևորգ Թադևոսյանը ներկայացրին առաջադրված թեկնածուների գործունեությունը: Այնուհետև Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանը և ռեժիսուրայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմեն Էլբակյանը ներկայացրին իրենց ծրագրային դրույթներն առաջիկա տարիների իրենց գործունեության վերաբերյալ: Փակ գաղտնի ընտրությամբ վերջիններս ընտրվեցին համապատասխան ամբիոնների վարիչներ:

Ռեժիսուրայի և Երաժշտության ամբիոնների պրոֆեսորների թափուր պաշտոնների համար Գիտական խորհրդի անդամները հաստատեցին առաջադրված Աիդա Հովհաննիսյանի և Հասմիկ Լեյլոյանի թեկնածությունը:

Փակ քվեարկության արդյունքում՝ մանկավարժական գիտությունների թեկնածուներ Սևադա Սարգսյանն ընտրվեց պրոֆեսորի, իսկ Անժելա Մինասյանը՝ դոցենտի պաշտոնների:

Գիտական խորհուրդը հաստատեց նաև Գիտական և ուսումնամեթոդական հարցերի հանձնաժողովի գործունեությունը, որը ներկայացրեց նախագահ Մարիամ Իսպիրյանը, այնուհետև պրոռեկտորը զեկուցեց Մանկավարժական համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց 2024 թվականին իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, ինչպես ➢2

Անելիքները շատ են, տիրույթը՝ հեպաքրքիր

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի ԳԵՎՈՐԳՅԱՆԸ մարտի 3-ին հանդիպեց ասպիրանտների և հայցորդների հետ

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց նրանց՝ հետագա մասնագիտական, իմացական պահանջմունքների ոլորտը մանկավարժության, հոգեբանության և դասավանդման տիրույթում ընտրելու համար. «Վստահ եմ՝ ձեզնից յուրաքանչյուրն ընտրելով այս երեք հիմնական ուղղությունները, այն է՝ մանկավարժական գործընթաց, հոգեբանական իմացություն մասնագիտական տիրույթում, դասավանդման մեթոդիկայի հնարներին տիրապետելու անհրաժեշտություն, կարևորել եք՝ հասկանալով, որ հասարակության տիրույթում ինչ արժեհամակարգ եք ձևավորում և թե ինչ հաջողություններ եք գրանցելու: Կապ չունի, թե դուք ապագայում ում եք ձևավորելու, որ ոլորտն էլ վերցնենք, ուսուցչի կարողություններով պայմանավորված, մենք ունենալու ենք ապագա մասնագետի ձևավորման, զարգացման արժեբանական այն նվաճումները, որոնցով կհաջողենք կամ ոչ»:

Սրբուհի Գևորգյանը փաստեց՝ թերևս չկա որևէ արդի հետազոտություն այսօրվա փուլում, քան գիտակցել ու հասկանալ՝ ում ենք մենք կրթում, ովքեր են այդ աշակերտները և ինչով են տարբերվում նախորդ սերնդի աշակերտներից, որոնք են հոգեբանական անհատական տիպաբանական այն առանձնահատկությունները, որով տվյալ սերունդը տարբերվում է մյուսից:

Սրբուհի Գևորգյանը խոսեց ներկա սերնդի երեխաների մասին՝ ընդգծելով, թե որքան խելացի ու բանիմաց են, որքան ուժեղ են, բայց միևնույն ժամանակ թույլ, զգացմունքային ու խոցելի: Նա մեջբերեց ամերիկյան մասնագիտական մի կենտրոնի ուսումնասիրությունների արդյունքները տարաբնույթ դրսևորումներով ընդգծվող ներկա սերնդի մասին:

Ներկա սերնդի մասին խոսելիս ռեկտորը նկատեց՝ նոր սերնդի երեխաները նրանք են, որոնց ծնողներն ամբողջովին ձևավորվել են տեխնոլոգիաների տիրույթում: Եվ այդ համատեքստում ընդգծեց ամերիկյան կրթական դաշտի հետազոտականությունը ագրեսիայի հիմնախնդրի վերաբերյալ և փաստեց, որ ուսուցիչների հետ ֆոկուս խմբեր ձևավորելիս՝ ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների խնդիրը տարբեր տարիքային խմբերում աեանցքային է դիտվում:

«Մարդը բնության պսա՞կն է, թե՞ ճշմարիտ են այն խոսքերը՝ որքան ճանաչում եմ մարդկանց, այնքան շատ եմ սիրում կենդանիներին: Այնուամենայնիվ ո՞վ է մարդը, ի՞նչ հիմնական սոցիալական ձեռքբերում է նա ունենում, որո՞նք են մարդու մեջ մարդկայինը պահպանելու և կրթական ոլորտում որպես արժեհամակարգ ձևավորելու այսօրվա մարտահրավերները: Ինչպե՞ս անել, որ կրթական համակարգում այլ անհատականությունների վարքը բավարար անդրադառնա յուրաքանչյուր աշակերտի վրա»,-այս և շատ այլ հարցեր բարձրացրեց ռեկտորը, հարցեր, որոնց պատասխանները դեռևս չկան:

Սրբուհի Գևորգյանն անդրադարձավ աշակերտի վարքի և ուսուցչի հեղինակության փոփոխություններին: Համացանցն այսօր շատ բան է փոխել մարդկանց կյանքում՝ սեփական կրթական ծրագիրը նախագծելու կարողության հնարավորություն ստեղծելով: Հոգ չէ, թե մենք հոգեբանական մի շարք խնդիրների ենք բախվում, երեխան իրեն ինքնաբավ է զգում վիրտուալ տիրույթում:

Տեխնոլոգիաներն արդեն մեր ➢2

ԶՆԾԱՂԻԿ

Ձմռան ու գարնան անվախճան կռվում,
Որտեղ ջերմ շունչն իր առնում է հողին,
Հանց հաղթանշան, մոմերի նման,
Վառում է գարունն անթիվ ձնծաղիկ:

Տեսնում է ձմեռն ու հուզվում է շատ
Եվ լաց է լինում նորից ու նորից,
Որ լույս ծաղիկն այդ գարնան դրոշակ,
Աշխարհ է գալիս իր արցունքներից:

Երվանդ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ 1958-1963 թթ.
շրջանավարտ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

➢1 Նաև 2025-ին նախատեսվող գործընթացները՝ ընդգծելով ոլորտում բուհի առաջընթացի դինամիկան:

Պրոռեկտորն անդրադարձավ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող ծրագրերին բուհի մասնակցությանը, ձևավորված ինստիտուտներին. առաջիկայում Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիան էլ կվերանվանվի և գործունեություն կծավալի որպես Մանկավարժահոգեբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա:

Մ. Իսպիրյանն անդրադարձավ թեմատիկ և նպատակային ֆինանսավորվող ծրագրերին, միաժամանակ թվերի վիճակագրությամբ՝ այլ կարևոր հարցերի ևս:

Նա ներկայացրեց նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների հրատարակված հոդվածների թիվը, միջազգային ցիտվող ամսագրերում հրապարակումների 2019-2024 թվականների համեմատական աղյուսակը՝ փաստելով, որ բուհը ձգտում է ընդգրկվել բուհերի վարկանիշավորման QS շարքում:

Գիտական խորհուրդն անդրադարձավ նաև գիտական կադրերի ատեստավորման նոր կարգին, բուհի 7 գիտական հանդեսներին, մասնագիտական խորհուրդների գործունեությանը, վերապատրաստումներին:

Անելիքները շատ են, տիրույթը՝ հետաքրքիր

➢1 Կյանքի բաղկացուցիչ մասն են, և երեխայի մտածողության սոցիալական տիրույթը փոխվել է, որի հուզական զգացմունքային դրսևորումները բոլորովին այլ են, որի ապրումակցման ամբողջ գործընթացը կոնկրետ փոփոխությունների է ենթարկվել:

Դիմելով հայցորդական համակազմին՝ ռեկտորը խոսեց տարբեր ոլորտներում տարբեր փոխներգործությունների մասին, որի ընթացքում շատ խնդիրների կբախվեն: Այնուամենայնիվ, ռեկտորը փաստեց, որ վերջիններս հետաքրքիր ոլորտ են եկել, որը կօգնի նաև իրենց՝ ճանաչելու սեփական հոգեկանը ռեֆլեքսիայի ենթարկելու և այդ ռեֆլեքսիան որպես մասնագիտական ձեռագրաբանություն փոխանցելու տարբեր տիրույթներ՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն մանկավարժական կրթություն:

Սրբուհի Գևորգյանը հայցորդներին հորդորեց դասընթացների ընթացքում հանդես գալ ակտիվ հարցադրումներով, որովհետև երբեմն «մեր լռությունը կարող է մեր իսկ դեմ լինել»:

Անելիքները շատ են, տիրույթը՝ հետաքրքիր՝ վստահեցրեց Սրբուհի Գևորգյանը՝ հույս հայտնելով, որ հայցորդների թեզերը իրապես կնպաստեն ոչ միայն նրանց իմացաբանական պահանջմունքների բավարարմանը, այլև կգործեն երեխայի մերօրյա այն պրակտիկ խնդիրների ու մարտահրավերների շրջանակում, որն այսօրվա երեխայի անհատականության ձևավորման ու հասարակության արժեհամակարգի խնդիրների ձևավորման կարևորագույն ձեռքբերում կլինի:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը և ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը շնորհավորեցին ասպիրանտներին և հայցորդներին գործընթացն սկսելու կապակցությամբ և ուրվագծեցին առաջիկա անելիքները:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մասնակցեցին աշխատանքային փաթեթի քննարկմանը

Էրազմուս+-ի «Արժեքներին միտված կրթության խթանումը Հարավային Կովկասի բուհերում» PROVE նախագծի շրջանակում մեկնարկել է 2-րդ աշխատանքային փաթեթի քննարկումները: ՀՊՄՀ-ից մասնակցում են Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանը, Կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մարիանա Ավետիսյանը, Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի գլխավոր մասնագետ Գոհար Առաքելյանը:

Աշխատանքային փաթեթի շրջանակում մշակվելու է մեկ ընդհանուր և յոթ հատուկ դասընթացներ գործընկեր համալսարանների ուսանողների և մեկական դասընթաց՝ ուսուցիչների վերապատրաստման համար:

Աշխատանքներն իրականացնելու համար ձևավորվել է 6 աշխատանքային խումբ. մշակվելու է վերոնշյալ դասընթացների գործողությունների պլանը:

Հիշեցնենք, որ եռամյա ծրագրի համակարգողը Վրաստանի Թելավիի պետական համալսարանն է: Նախագծի հիմնական նպատակը ՀՀ և տարածաշրջանային բուհերում արժեքներին և գիտելիքին միտված կրթության (VaKe) զարգացումն է: Կարիքների գնահատման նպատակով կիրականացվի քանական և որակական հետազոտություն, վեր կհանվեն դասավանդման և ուսումնառության ընթացքում դասավանդողների կիրառող մեթոդները, մոտեցումների հիմնական խնդիրները:



ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄՏՔԵՐԻՑ

Ամեն օր ձեր գլուխը բարձին դնելուց ու քնելուց առաջ հիշեք, թե այդ օրը ի՞նչ եք արել ձեր ազգին համար:

Ամեն հայ, եթե միմիայն իր համար ապրելու մասին չմտածեր, մեր աղետների մեծ մասը պակաս կլիներ:

Իմ կուսակցությունն իմ ազգն է:

Մարդ կարող է հարյուր տուն ունենալ, բայց միայն մի Օջախ:

Եթե կուզեն ինձ պատիվ անել, ես իմ արձանը չեմ ուզում, փառավոր թաղում չեմ ուզում: Թող հայ ժողովուրդը կանգնեցնի ավերակ դարձած Առաքելոց վանքը և այնտեղ փոքրիկ ուսումնարան կառուցի հայ մանուկների համար: Այս է իմ ամբողջ բաղձանքս և բարոյական պահանջս հայ ժողովրդից:

Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում:

Շնորհավորում ենք

Հայաստանի գրողների միությունը միության անդամ տարբեր գրողների 2024 թ. ամենամյա մրցանակների է արժանացել:

Հպարտությամբ նշում ենք, որ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանին ևս մրցանակ է շնորհվել. պրոֆեսորն արժանացել է «Հովհաննես Թումանյանի անվան» մրցանակի:

Շնորհավորում ենք պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանին և մաղթում նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ:

ՄԱՐՏԻ 5-Ը ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ Է

Վաչգեն ՍԱՐԳՍԱՆ

Այս երկիրը համընդհանուր սիրո երկիր է

Այս երկիրը անտրամաբանական սիրո և անտարամաբանական ատելության երկիր է:

Ես երջանիկ մարդ եմ, որովհետև ինձ պատիվ ընձեռվեց իրականացնել այն երազանքները, որպիսիք փայփայում էինք գրողներս, լրագրողներս: Բայց դա բախտի բան չէ, ես եմ ընտրել իմ ճանապարհը:

Յուրաքանչյուր ժողովուրդ՝ լինի 3 միլիոնանոց, թե 300 միլիոնանոց, միշտ իր միջից կարող է հանել այնքան մարդ, որոնք կարող են երկիրը պահպանել:

Այս երկիրը բառերով սիրվող երկիր չէ, նաև հեռադիտակով դիտվող երկիր չէ, քարի հետևում քար կա, մշուշի ետևում՝ մշուշ:

Ինձ չեն հասկանում: Ինձնից վախենում են: Իրենց համար արջի կերպար են ստեղծել ու իրար վախեցնում են: Մեկ-մեկ ես էլ եմ վախենում, որ չեմ հասցնի, ժամանակ չեմ ունենա, ցանկություն չեմ ունենա, չգիտեմ էլ ինչ չեմ ունենա ժողովրդին ասելու՝ ա՛յ ժողովուրդ, իրար հասկանանք, ճիշտ հասկանանք իրար:

Ես Աստված չեմ, ես զինվոր եմ, ես հայ եմ: Ամեն մարդ ինքն իր առաջ պիտի պատասխան տա՝ ո՞վ է ինքը:

Թշնամուդ ուժեղացնողը քո վախն է, քո ցավն է, քո հիմարությունն է:

Ոչ մի ծրագիր, որքան էլ այն փայլուն լինի, չի կարող իրականություն դառնալ, եթե չկա հավատք, նպատակին հասնելու համախմբվածություն, եթե մեզանից յուրաքանչյուրը չի մտածում, որ այս երկրի ճակատագիրը կախված է մի մարդուց, և այդ մարդն ինքն է:

Ես աշխարհում ամենից շատ սիրում եմ ծերերին և երեխաներին, այդ երկուսն են անպաշտպան:

Մենք ընտիր-ընտիր հպատակ ենք, մենք խելոք-խելոք կատարող ենք, մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ: Հայ մարդ, հիմա ուրիշը դու ես: Քո ուրիշը դու ես:

Այս երկրի սահմանները գծվում են արյամբ և ամրանում քրտինքով:

Դարերի մեռած պատմությունը թափ տվեք ձեր հոգուց, մի մեռեք ձեր տան մեջ: Ձեր հոգու մեռելներին թաղեք: Էս երկիրը ձերը չէ, դուք գալիս-անցնում եք, ձերը էս երկրի սիրտը պահելն է: Սիրտը:

Բանակն ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարն է, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերագնահատումը և հայացքը ապագային: Սիրուն խոսքեր չեմ ասում, ընդամենը ճշմարտությունն եմ ասում:

Ավելի լավ է մեկ մոմ վառել, քան հավերժ բողոքել խավարից:

Այս երկիրը բառերով սիրվող երկիր չէ, անհատական սիրո երկիր չէ: Այս երկիրը համընդհանուր սիրո երկիր է:

Մենք այս պետության պատասխանատուներս չպետք է թույլ տանք, որ ***Անկախությունը, Ազատությունը, Հաղթանակը*** ժողովրդի համար դառնան սովորական գաղափարներ:

Աշխատանքային այց Իսպանիայի Վալլադոլիդի համալսարան

Փետրվարի 24-26-ը ՀՊՄՀ «Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա» գերազանցության կենտրոնի ծրագրի շրջանակներում Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Արթուր Թադևոսյանը, Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանը, Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի դասախոս Անժելա Մինասյանն ու Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ Անուշ Դանիելյանն Իսպանիայի Վալլադոլիդի համալսարանում էին:

ԲՏՃՄ՝ ինֆորմատիկա, ֆիզիկա, մաթեմատիկա, կենսաբանություն ոլորտները ներկայացնող մասնագետների այցի նպատակն էր ուսումնասիրել արտերկրի առաջավոր բուհերում համանման կենտրոնների գործունեությունն ու կուտակած փորձը՝ Գերազանցության կենտրոնի գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար:

Այցի շրջանակներում ՀՊՄՀ պատվիրակները ծանոթացան Վալլադոլիդի համալսարանի կառուցվածքին ու առանձին՝ կրթության, գիտության, բժշկության, փիլիսոփայության և պատմության, տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետների տեղաբաշխվածությանը: Այնուհետև, կրթության ֆակուլտետի վարչական աշխատակիցները ՀՊՄՀ պատվիրակներին ներկայացրին ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրի առանձնահատկությունները:

«Կրթական ծրագրում հիմնական ժամաքանակը հատկացված էր մանկավարժական առարկաներին, դասավանդման մեթոդիկաներին ու դիդակտիկ նյութերի պատրաստմանը: Այստեղ ուսանողներին սովորեցնում էին, թե ինչպես սովորեցնել՝ «teach how to teach»: ԲՏՃՄ առարկաների մեջ այս համալսարանում ընդգրկված են նաև արվեստի ոլորտի (նկարչություն, երաժշտություն) առարկաներ: Արդյունքում՝ ԲՏՃՄ (STEM) կոչվում է ԲՏՃԱՄ (STEAM)»,-նշեց Արթուր Թադևոսյանը:

ՀՊՄՀ ներկայացուցիչները եղան նաև Վալլադոլիդի համալսարանի Սեգովիայի մասնաճյուղում, որտեղ ուսուցիչներ են պատրաստում տարրական դպրոցների համար: Մասնավորապես՝ տարրական դասարաններում STEAM առարկայի միջոցով իրականացվում են բնապահպանական նախագծեր, որոնք վերաբերում են կլիմայական փոփոխություններին:

Այցի շրջանակներում նրանք ոչ միայն լսողի ու դիտողի դերում էին, այլև նրանց հնարավորություն տրվեց մասնակցելու STEAM առարկայի գործնական պարապմունքին, որտեղ ուսանողները խմբային աշխատանք էին կատարում «Ինչ անել, որ ինքնաշեն թռչող սարքն անցնի ավելի երկար ճանապարհ» առաջադրանքի շուրջ:

Վալլադոլիդի համալսարանում ՀՊՄՀ պատվիրակները մասնակցեցին նաև FERTILE հարթակի միջոցով STEAM առարկայի շրջանակում նախագծային աշխատանքների իրականացման վերաբերյալ կազմակերպված սեմինարին:

Նրանք եղան նաև Վալլադոլիդի համալսարանի քիմիական լաբորատորիայում, ծանոթացան նախագծի, որի նպատակն էր կրթության մեջ գիտության և սոցիոլոգիայի ինտեգրումը:

Այցելություններ եղան նաև Վալլադոլիդի համալսարանի ռեկտորատ, գիտական և կրթական ժամանակակից հագեցվածություն ունեցող տարբեր լաբորատորիաներ, որտեղ տեղի ուսանողները հնարավորություն ունեին իրականացնելու իրենց գիտական ուսումնասիրություններն ու հետազոտությունները:

Վալլադոլիդ կատարած այցի շրջանակներում Մանկավարժականի պատվիրակները հյուրընկալվեցին նաև կաթոլիկ դպրոցում (School Nuestra Senora de Lourdes), հանդիպեցին և քննարկումներ ունեցան դպրոցի տնօրենության հետ:

ՀՊՄՀ պատվիրակները վստահ են՝ վերոնշյալ այցելություններից, քննարկումներից և սեմինարներից ստացված փորձը կօգնի հետագայում մշակել ՀՊՄՀ գերազանցության կենտրոնի ուսումնական մասի բովանդակությունը՝ ԲՏՃՄ ուղղությամբ կրթական ծրագրերի վերանայման, վերապատրաստման մոդուլների մշակման գործում:

Սպասված մանկավարժի հավաստագրեր

Մանկավարժական համալսարանում «Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման» կրթական ծրագրի դասընթացների մասնակիցներին փետրվարի 28-ին հավաստագրեր հանձնեց Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը:

16 առարկայի գծով կրթական չորսամսյա ծրագրով հավաստագիր ստացավ 56 մասնակից:

Պրոռեկտոր Սաֆարյանը ողջունեց ներկաներին՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրենց գործունեությունն սկսելու և շարունակելու ո-

րոշման համար:

Նաիրա Սաֆարյանը նշեց՝ գործընթացը շարունակական է, անելիքները՝ շատ. «Համարեք, որ այս դասընթացը Մանկավարժական համալսարանի հետ համագործակցության սկիզբն է միայն: Մասնագիտական գործունեություն ծավալելիս տարբեր շրջափուլերում պարբերաբար առնչվելու եք բուհի հետ. մշտապես պատրաստ ենք պատասխանել բոլոր հարցադրումներին և աջակցել: Դուք մեր մեծ ընտանիքի լիիրավ անդամն եք. մաղթում եմ մեծ հաջողություններ»,-ասաց պրոռեկտորը:

Պրոռեկտորն անկեղծացավ՝ արդեն մի քանի տասնամյակ զբաղվում է մանկավարժությամբ. ոչ մի րոպե չի ափսոսում կատարած ընտրության համար: Իր գործունեության ընթացքում չի դադարել հավատալ ֆիզիկայի օրենքներին. դրանք բնության օրենքներ

են, որ երբեք չեն խախտվում: Այսօր էլ, բազմաղորտ իրականությունում, կընտրեր մանկավարժի մասնագիտությունը. «Ինչ սիրով, նվիրումով և հարգանքով վերաբերվես աշակերտին, քո աշխատանքին, նույն արձագանքը ֆիզիկայի օրենքի համաձայն կվերադառնա քեզ»,-նշեց Նաիրա Սաֆարյանը:

Նա վստահ է՝ դժվար ժամանակներում անգամ, երբ ուսուցչին և դպրոցին ուղղված են բազմաթիվ քննադատություններ, հնարավոր է առողջ սերնդափոխություն:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Թող նրա օրինակը դառնա ձեր ապրելու կերպը

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի 1-ին կուրսի ուսանող Վոլոդյա Միերի Աբրահամյանը մասնակցեց Արցախի սեպտեմբերյան հերոսամարտին: Իշխանասարի ամենաբարձր դիրքերում 25 զինվոր, որոնց թվում էր և Վոլոդյան, անհավասար մարտում մինչև վերջին շունչը պայքարեց՝ սպասելով օգնության, որն այդպես էլ չհասավ... 25 զինվոր այդ ճակատագրական օրը զինվորագրվեց երկնքին...

Վոլոդյայի կուրսը մի քանի ամսից ավարտում է, իսկ կուրսի ավագ Վոլոդյան հա-

վերժ մնաց առաջին կուրսում...

Եվ ահա Արթուր Բաղդասարյանի ղեկավարած կուրսը որոշել էր հարգանքի տուրք մատուցել կուրսընկերոջ հիշատակին: Ներկաները ծաղիկներ խոնարհեցին համալսարանի Ալեք Մանուկյան հասցեում գտնվող մասնաշենքի բակում տեղադրված հուշաքարին:

Հնչեց «Հայր մեր»-ը, ապա Արցախյան երրորդ պատերազմում բուհի զոհված ուսանողների հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանի մոտ Տ. Թովմա քահանա Անդրեասյանը կատարեց Վոլոդյա Աբրահամյանին նվիրված հոգեհանգստի կարգ:

«Մարդկությունը շարունակում է մեղքեր գործել,-ասաց նա,-ցավոք, հայ ժողովուրդն էլ դարերի ընթացքում չի փոխվում, ավելի լավը չի դառնում, և այդ պատճառով տեղի են ունենում նահատակություններ: Եկեղեցու հայտնի աստվածաբաններից մեկն ասում է. «Նահատակների արյունը եկեղեցու սերմն է: Ուրիշ թարգմանությամբ ասում են՝ նահատակների արյունը եկեղեցու քարերն են»: Եվ իսկապես դրա մեջ մեծ ճշմարտություն կա: Նահատակները, հեռանալով մեզնից, դառնում են Աստծո բարեխոս մնացողների համար: Մենք չենք կարողանում հասկանալ, թե ինչքան մեծ դեր ունի մեր սրբերի՝ մեզ համար նահատակվածների խոսքը Աստծո մոտ»:

Նա երիտասարդներին հորդորեց՝ աղոթել հայրենիքի և ազգի փրկության համար, քանզի «Վոլոդյան և մյուսները համալրել են Աստծո բանակը: Մեր գոյության համար մեծ դեր են կատարում նա և մյուս տղաները, որ զոհվել են: Կյանքը տրված է հայրենիքը փրկելու համար, և կյանքն արժեք չունի, եթե այն հայրենիքի ու հավատի համար չի, ազգի համար չի»:

Կուրսեցիներով պատրաստել էին մի տեսանյութ, որն առանց հուզմունքի հնարավոր չէր դիտել: «Նրանցից մեկը. Վոլոդյա Աբրահամյան» խորագրով տեսանյութում ընդգծված էր Վոլոդյայի անհատականությունը և այն արժեքները, որ նա կրում էր իր մեջ. Վոլոդյա Աբրահամյան՝ միշտ ներկա մեր լսարանում, մեր կյանքում և աղոթքներում: Այսօր, վաղը և միշտ; Պատիվ ունեմ»,-բոլոր կուրսեցիների անունից ամփոփեց հերոսի կուրսընկերուհին:

«Մեզ համար պատիվ է ներկայացնել մեր հերոս գործընկերոջը, և ևս մեկ անգամ վերապրել այն գեղեցիկ ուսումնական շրջանը, որ կիսել ենք նրա հետ: Վոլոդյայի մտավոր հատկանիշները նրան առանձնացնում էին բոլորից, և մենք վստահ ենք, որ նա կդառնար լավ լրագրող և հաղորդավար, եթե կարողանար շարունակել այդ ուղին: Ցավոք 2022 թվականի սեպտեմբերի 13-ին թշնամու կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքով Իշխանասարի բարձունքում զոհվեց մեր ընկերը»,-ներկայացրեց կուրսընկերուհին:

Քաջ զինվորը զոհվեց հայրենիքի համար՝ ուսանողական շարքերը կիսատ թողնելով: Բայց նրա հիշատակը և գործը միշտ



ուղեկցելու են կուրսընկերներին, որոնք կյանքի դժվար պահերին զգում են հերոսի ներկայությունն իրենց կյանքում:

Տեսաֆիլմում Վոլոդյայի մայրը վերհիշում էր՝ կապույտ աչքերով, պայծառ ու ժպտուն հայացքով իր տղան շտապում էր ապրել, ամեն ինչ հասցնել: Շտապեց նաև հասնել հայրենիքի սահմանները՝ երկրի համար այնքան օրհասական պահին:

Վոլոդյայի մոր և տատիկի ներկայությունը ֆակուլտետի լսարանում ավելի քան խոսուն էր, բոլոր հնչած խոսքերում արժևորվում էր հերոս տղայի կյանքի օրինակը:

Ելույթ ունեցավ ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը: «Վոլոդյան համալսարանի ավագ դպրոց-վարժարանի սան է եղել, պայծառ ժպիտով ու հայացքով մի աշակերտ, որ առաջին իսկ օրից իր տեղն ամրագրել էր մեր սրտի մի անկյունում: Մեծ ցավ ապրեցինք՝ իմանալով նրա մահվան մասին: Նա մեր սրտերում, հուշերում հենց այսպիսին էլ կա»,- ասաց պրոռեկտորը՝ նայելով լսարանի մի անկյունից ժպտացող պայծառ հայացքով Վոլոդյայի նկարին:

«Մեծ կորուստները ցավ են ու կսկիծ, բայց նաև խորհուրդ են. Վոլոդյան իր գործն արել է արդեն և երկնային բանակի զինվոր է արդեն: Նման ապրելու կերպը, նման խորհուրդները պետք են ապրողներին, պետք են ձեզ: Ուզում եմ, որ դուք գիտակցեք ոչ միայն այդ կորուստը, այլև փորձեք ապրել այդ խորհրդին՝ նրա կատարած սխրանքին արժանի ձևով: Նա հայրենիքի համար գնաց: Թող նրա օրինակը դառնա ձեր հավատամքը, ձեր ապրելու կերպը: Դուք Վոլոդյայի արժանի ընկերներն եք: Ձեր ընկերոջ հիշատակը պահելով՝ դուք ավելի կիմաստավորեք ձեր կյանքը»,-կուրսընկերներին դիմեց Հեռուստալրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը:

«Նա այնքան նպատակասլաց էր, ավագ, որ կուրսին կարող էր տանել իր հետևից»,-ասաց կուրսղեկ Արթուր Բաղդասարյանը՝ հայրենիքի համար նահատակվելու պատրաստ անձ դաստիարակելը համարելով մեծագույն շնորհ և առաքելություն բոլոր ազգերի համար:

Ամիսներ անց լրագրողների այս խումբը հրաժեշտ կտա համալսարանական կյանքին, կծավալի մասնագիտական գործունեություն: Արթուր Բաղդասարյանը փաստեց՝ այդ ճանապարհին գայթակղություններ շատ կլինեն, սակայն Վոլոդյան և մյուս հերոսները պետք է լինեն այն համեմատելի սանդղակը, որը միտված է լինելու ուսանողների անկեղծության, մասնագիտական պարտքի, հայ ազգային ինքնության, ծնողների ու պապերի ժառանգության արժևորմանը»:

Նա հերոսի կուրսընկերներին հորդորեց ականջալուր լինել Հրանտ Մաթևոսյանի խոսքին՝ հիշողությունն ընկած է մարդու և անասունի արանքում. միշտ պահեք ձեր հիշողությունը, միշտ հիշեք բոլոր նրանց, ովքեր նահատակվեցին:

«Լրագրությունը մեծ առաքելություն է,- ասաց Տ. Թովմա քահանա Անդրեասյանը՝ ափսոսալով, որ Վոլոդյային չհաջողվեց այդ ասպարեզ մտնել: Նա երիտասարդներին հորդորեց ՝ մասնագիտական դաշտ մտնելով՝ հավատարիմ լինել հերոս ընկերոջ պատգամներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԸ 140 ՏԱՐԵԿԱՆ Է

ԳՐՈՂԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Այս տարի լրանում է արեւմտահայ բանաստեղծ, 1915-ի ցեղասպանության նահատակ Ռուբեն Սեւակի 140-ամյակը: Դեռեւս 2013-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բացված թանգարանում փետրվարի 23-ին կազմակերպված միջոցառմանը թանգարանների եւ արխիվի տնօրեն Հոգեշնորհ Տեր Ասողիկ աբեղա Կարապետյանի հրավերով ներկա էին Մանկավարժական համալսարանի Հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ու բանասիրական բաժանմունքի երրորդ լսարանի ուսանողները:

Հանդիսությունը վարում էր թանգարանի տնօրեն Տեր Սեւակ քահանա Հակոբյանը:

Օրվա բանախոս պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը Ռուբեն Սեւակին անվանեց մեր բանաստեղծության պատիվը, 20-րդ դարասկզբի հայ գրականության երեւելիների շարքում նվիրական անուն, որի աշխարհատես ոգին մեզ հետ է: Նա մասնավորապես ծանրացավ նրա՝ Կիլիկյան աղետն արտացոլող ստեղծագործություններին, «Կարմիր գիրքը» հատորին, ցույց տվեց այն դասերը, որոնցով

գրողն այսօր էլ մնում է մեր կողքին՝ հիշեցնելով ժողովրդին ուղղված «մարդկորեն կատղելու» պատգամը:

Ելույթ ունեցավ բանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Աթանեսյանը:

Գեղարվեստական հայտագրում Սեւակի բանաստեղծություններից կարդացին Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի դերասանները, հնչեցին վոկալ կատարումներ հայ եւ օտար կոմպոզիտորներից:

Հանդիսությունն ամփոփեց եւ օրհնության խոսք ասաց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Տեր Նաթան Արք. Հովհաննիսյանը:

Մանկավարժական համալսարանի դասախոսները և ուսանողները եղան Ս. Էջմիածնի Մայր տաճարում եւ Սուրբ Հռիփսիմե եկեղեցում:

ԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանասիրական բաժանմունքի երրորդ կուրս

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴՊՐՈՑ

Բարեկենդանի կոնը Ավետիսյան դպրոցում

Երևանի Խորեն և Շուշանիկ Ավետիսյանների անվան կրթահամալիրում մարտի 3-ին մեծ տոնախմբությամբ նշեցին Բուն Բարեկենդանը: Ընդարձակ դահլիճի բեմը դպրոցականները զարդարեցին տոնը խորհրդանշող ծառերով, տիկնիկներով, ապա միջոցառումը վարողները ներկայացրին Բարեկենդանի տոնի խորհուրդը. «Առաջին մարդը դրախտում Տիրոջից պատվիրան ստացավ՝ դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք»: Ամեն ծառից ուտելը խորհրդանշում է բարեկենդանը, իսկ մեկից չուտելը, որը դրախտի մեջտեղում է, խորհրդանշում է պահքը»:

Դպրոցականները ներկայացրին հայկական մշակույթի ամենագեղեցիկ ու խորհրդանշական արժեքներից հայոց ծիսական տիկնիկներին՝ ակլատիզներին, հիշեցնելով, որ նրանց միջոցով մարդիկ ձգտել են ապահովել բերք ու բարիքի առատությունը, պտղաբերությունն ու ընտանեկան հաջողությունները:

Երեխաները մատուցեցին շատ հետաքրքիր պատմություն այն մասին, որ երբ օրացույց չկար, Մեծ պասի յոթ շաբաթների փոխարեն մամիկները յոթ փետուր են խփել երդիկից կախված մի մեծ սոխի և անունը կնքել ակլատիզ, և ամեն շաբաթը լրանալիս մի փետուր են նրանից պոկել: Վերջին՝ յոթերորդ փետուրը պոկելուն պես եկել է Սուրբ Զատիկը:

Բեմում Ուտիս տատն ու Պաս պապիկն էին՝ մեկը շերեփը ձեռքին, մյուսը՝ չոմբախն ուսին: Բուն Բարեկանդանն ավարտվում է, ահա ինչու Պաս պապը խլում է Ուտիս տատի շերեփը:

Բարեկենդանի տոնական բեմը տրամադրվում է ազգային խաղերին.

աքլորակռվում հաղթողները նրանք են, ովքեր կարողանում են պահել հավասարակշռությունը: Աքլորակռվին հաջորդում է գոմշակռիվը, որն անցյալի ամենահայտնի խաղերից է:

Խաղ-կատակներով բեմն աստիճանաբար աշխուժանում է. ուրախ երգ ու պար՝ ուսուցիչ ու աշակերտ երգում ու պարում են, հարսանեկան բեմադրությունն էլ ավելի քան ոգևորում է ներկաներին, որից հետո խաղահրապարակը տրվում է լարախաղացին: Դպրոցի բակում լարախաղաց-փահլևանը վտանգավոր, բայց գրավիչ հնարքներով հիացնում է տոնի մասնակիցներին, որը ևս ուղեկցվում է ավանդական զուռնա-դհոլով, երգ ու պարով:

Տոնն ամբողջանում է Բարեկենդանի առատ ու ճոխ հյուրասիրությամբ դպրոցի ընդարձակ սրահում՝ ուսուցիչների, ծնողների ու սովորողների ակտիվ մասնակցությամբ:

«Երեկվանից աշխարհի բոլոր քրիստոնյաները տոնում են Բուն Բարեկենդանը: Տաղավար տոնը մեծ խորհուրդ ունի բոլոր քրիստոնյաների համար, որը նախորդում է Հարությանը և Սուրբ Զատիկին»,- ասաց դպրոցի տնօրեն Մելանյա Գեղամյանը:

Համադպրոցական ծրագրով տոնը նշում են դպրոցի 800-ից ավելի բոլոր աշակերտները, ուսուցիչները և ծնողները:

Մեզ հետ զրույցում դպրոցի տնօրենը փաստում է. «Ամեն տարի մեծ շուքով նշում ենք Բարեկենդանի տոնը, Զատկական տոնավաճառ ենք կազմակերպում և 40 օրվա պահքի խորհուրդը ամրացնում երեխաների գիտակցության մեջ, որ ամեն պահ հիշեն՝ իրենք քրիստոնյա են: Հայ Առաքելական եկեղեցին կարևոր տաղավար տոներից մեկը սա է համարում, որին հետևելու է Սուրբ Հարությունը:

Մենք այս մաքրության գաղափարը շատ կարևորվում ենք: Ցավոք այսօր մարդիկ մտածում են, որ միայն պահք պահելով է, բայց տոնի խորհուրդն ավելի մեծ է՝ լեզվին զգուշություն տալը, պարկեշտ լինելը, ավագներին հարգելը, փոքրին օգնելը: Դպրոցականների տարիքին համապատասխան փորձում ենք ներկայացնել այս ամենը, որովհետև գլոբալիզացիայի ժամանակաշրջանում շատ կարևոր է վերածնել, պահպանել մեր ազգային արմատները: Մենք փորձում ենք մեր ազգային, մեր ծեսերն ու լավագույն տոները պահպանել ու փոխանցել սերունդներին»:

Վաղ առավոտից Ավետիսյան դպրոցում թևածող երգն ու պարը շարունակվեց մի քանի ժամ՝ տոնախմբության խորհուրդն ու բովանդակությունը սփռելով շուրջբոլոր:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Գնալ նպատակների ճանապարհով...

Դեռևս մանկուց հետաքրքրված եմ եղել երաժշտության մոլեգնող և կախարդական աշխարհով, այն աշխարհով, որտեղ խաղաղվում և գտնում ես քո հանգստությունը:

Այն շնորհը, որն այսօր ունեմ ես, Աստծո ամենամեծ նվերն է, այն տրվել է ի վերուստ:

Ես Սյուզաննա Մկրտչյանն եմ: Չեմ դարձել, այլ հոգով ծնվել եմ երաժիշտ, երաժիշտ, որն իր տաղանդին գումարելով աշխատասիրությունը, հասնում է իր առջև դրված բոլոր նպատակներին, չնայած...ճանապարհը փշոտ և քարքարոտ է, նաև պահանջում է բավականաչափ համառություն, կամքի մեծ դրսևորում և չկոտրվելու բացարձակ կարողություն:

Չորս տարեկան էի, երբ հաճախում էի Նորատուս գյուղի արվեստի դպրոցի պարային բաժին: Ուսումնառությանը զուգընթաց բացահայտվում էին երաժշտական ունակություններս:

Մի օր քրոջս նվագած մեղեդին փորձեցի ինքս կատարել, և ա՜յ քեզ հրաշք. նվագեցի ճիշտ նույն կերպ, առանց նոտաներն իմանալու: Այդ օրը վճռական եղավ ինձ բացահայտելու համար: Եվ այդպես, տատիկիս հորդորով, մայրիկիս ուղեկցությամբ այցելեցինք դպրոց, որտեղ էլ ինձ ընդունեցին դաշնամուրային բաժին:

Եվ 2009 թվականին կայացավ իմ առաջին բեմելը «Դաշնամուրի մոտ» հեռուստանախագծի շրջանակներում, որտեղ կատարում էի հայտնի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Լինելով յոթ տարեկան փոքրիկ երեխա՝ առաջին անգամ էի բեմում, առաջին անգամ էի հեռուստաէկրանից ներկայանում: Տարիների ընթացքում ամրացած այդ վառ հիշողությունները անջնջելի հետք են թողել. իմ մասնագիտությունն այնչափ հոգեհարազատ էր ինձ, դարձա իմ «երկրորդ տան» նվիրյալ սանը: Հաճախեցի ժողովրդական և գուսանական երգի բաժին, քանոնի և սանթուրի, սակայն այդ բոլորից անչափ հարազատը և կարևորագույնը դարձան դաշնամուրը և, իհարկե, ժողովրդական երգը, որ մինչ այսօր ուղեկցում են ինձ:

Դպրոցում իննամյա կրթություն ստանալուց հետո ուսումս շարունակեցի Գավառի պետական երաժշտական ուսումնարանում, որտեղ նույնպես բարձր առաջադիմությամբ սովորում և մասնակցում էի կազմակերպվող միջոցառումներին, նաև միջազգային մրցույթ-փառատոններին:

Ուսումնարանում ուսանելու տարիներին ընդունվեցի մեծանուն կոմպոզիտոր լուսահոգի Արթուր Գրիգորյանի հիմնած Հայաստանի Երգի պետական թատրոն:

Թատրոնը հաջողության բանալի է երիտասարդ կատարողների ձեռքում: Այն կոփում և դեպի ճիշտ ճանապարհ է ուղղորդում երաժիշտ կատարողներին, ձեռք բերած ընկերները դառնում են ընտանիք, ուսուցիչները՝ անփոխարինելի խորհրդատուներ:

Ավարտելով ուսումնարանը՝ հանդես եմ եկել մենահամերգով, կատարել ինչպես դաշնամուրային գործեր, այնպես էլ վոկալ արվեստի ճանաչված ստեղծագործություններ:

Պահպանելով արվեստի հանդեպ ունեցած իմ մեծ սերը՝ ուսումս շարունակեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ հույս ունենալով և վստահ լինելով, որ այն բոլոր նպատակները, որոնք մինչ այդ չէի իրականացրել, կիրականացնեմ պրոֆեսիոնալ դասախոսական կազմի շնորհիվ:

Եվ, իսկապես, թվացյալ անհնարինը դառնում էր հնարավոր, երբ իմ կյանքի ճանապարհին հանդիպում էի այնպիսի մարդկանց, որոնք իրենց վարպետությամբ, ճիշտ խորհուրդներով իմ կյանքն ավելի հետաքրքիր և յուրահատուկ էին դարձնում: Այդ մարդկանցից է ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր, երաժշտական կրթության ամբիոնի դասախոս Տիգրան Ալավերդյանը: Մարդ, որը գնահատեց և օգնեց ինձ՝ հասնելու իմ նվիրական երազանքներին, մարդ, ում շնորհիվ զգում էի իմ առաջընթացն ամեն դասընթացից հետո: Իմ ձեռքերը կոփվում, ավելի ճկուն և ամուր էին դառնում:

Համալսարան ընդունվելուն պես առաջին իսկ օրվանից ակտիվորեն մասնակցել եմ համալսարանական բոլոր համերգներին՝ արժանանալով հանդիսատեսի, մասնագետների համակրանքին ու խրախուսանքին:

Միմյանց հաջորդում էին հաղթանակներն ու հաջողությունները:

2022 թվականից սկսած՝ մշտապես փնտրել և տեղեկացել եմ նոր ծրագրերի,առաջարկների և նորությունների մասին: Մասնակցել եմ մի շարք միջազգային մրցույթների ինչպես առկա, այնպես էլ հեռավար ձևաչափով: Մրցութային ծրագրով եղել եմ Եգիպտոսում, Կիպրոսում: Առավել նշանակալի էր այն մրցույթը, որին մասնակցեցի հեռավար ձևաչափով, և որն էլ նոր դռներ բացեց իմ առջև: Մասնակից հիսուն և ավելի դաշնակահարներ աշխարհի տարբեր երկրներից, ու նրանց կողքին զբաղեցրի առաջին պատվավոր հորիզոնականը:

Շարունակում էի դաշնամուրի մասնագիտացված վարպետության դասերը՝ առավել ամրապնդելով և խորացնելով երաժշտական գիտելիքներս, որն էլ իր հերթին ամփոփվում էր եզրափակիչ համերգով:

Այսպես կարող եմ թվարկել մի շարք իրադարձություններ, որոնք կատարվել են իմ կյանքում, որոնք ինձ կոփել, ավելի ուժեղ և նպատակասլաց են դարձրել:

ՀԲԸՄ-ն բացահայտում էր տաղանդներ, այդ շրջանակներում նույնպես ունեցել եմ ակտիվ մասնակցություն: Նշեմ, որ մրցատյանի կազմում հայտնի հայ և այլազգի դաշնակահարներ, երաժիշտներ էին: Շրջադարձային էր 2024 թվականին կայացած համերգը՝ նվիրված հայ երգի մեծ վարպետ, ծովաստղիկ Ֆլորա Մարտիրոսյանին: Համերգի ընթացքում կատարում էի նրա գրեթե բոլոր բարդ երգերը: Այդ համերգն ինձ համար եղավ ինքնարտահայտման,ինքնադրսևորման միջոց, որով համակեցի ներկաներին: Դա առիթ եղավ մասնակցելու Ֆլորա Մարտիրոսյանին նվիրված հաղորդմանը: Համերգը հիշարժան էր, տպավորիչ և իմ հիշողությունների մեջ՝ անջնջելի:

Օրեր առաջ էլ հյուրախաղերով Հայաստան էր ժամանել իտալացի դաշնակահար, պրոֆեսոր Անտոնիո Չաչիոն, որը Երևանի պետական կոնսերվատորիայում անցկացրեց վարպետաց դաս, ինչը ինձ համար նույնպես առանձնահատուկ էր: Մասնակցելով դասընթացին՝ հրավեր ստացա ամռանը մասնակցելու Իտալիայում կայանալիք վարպետության դասերին, որը կամփոփվի համերգով:

Այսպիսով, իմ անցած ուղին դյուրին չի, բայց այն ինձ միայն օգնել է առաջ շարժվել, չընկճվել ու համառորեն գնալ նպատակների ճանապարհով:

Իսկ համալսարանը, որտեղ շարունակում եմ սովորել, տալիս է լայն հնարավորություններ՝ ձեռք բերելու նոր հմտություններ ու կարողություններ: Համալսարանը շարժիչ ուժ է՝ իմ մասնագիտական նպատակներին հասնելու գործում:

Սյուզաննա ՄԿՐՏՉՅԱՆ

Ուսուցչի մասնագիտությունը պարզապես աշխատանք չէ...

Ես Անահիտ Ղազարյանն եմ, 19 տարեկան, սովորում եմ Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկա-ինֆորմատիկա բաժնի առաջին կուրսում:

Ծնվել և մեծացել եմ Շիրակի մարզի Արթիկ համայնքի Մեղրաշեն գյուղում, որտեղ էլ անցել են իմ մանկությունն ու դպրոցական տարիները: Գյուղի դպրոցը ոչ միայն դարձել է կրթությանս հիմքը, այլև մեծապես նպաստել է իմ անձի ձևավորմանը՝ ձևավորելով նպատակներս ու տալով առաջին փորձառությունները:

Ավարտական դասարաններում, երբ պետք է ընտրեի ապագա մասնագիտությունս, դեռ հստակ պատկերացում չունեի մասնագիտական կողմնորոշման մասին: Ուսուցիչներս հաճախ էին հարցնում՝ արդյո՞ք ինձ տեսնում եմ ուսուցչուհու դերում, բայց այդ ժամանակ մանկավարժությունը թվում էր չափազանց բարդ և պատասխանատու ոլորտ: Կարծում էի, որ այն պարզապես իմը չէ: Ուստի, երբ ինձ հարցնում էին՝ կցանկանա՞մ արդյոք ուսուցիչ դառնալ, իմ պատասխանը «ոչ»-ն էր:

Սակայն, ինչպես հաճախ պատահում է կյանքում, մեր պատկերացումները փոփոխվում են: Երբ ընդունվեցի Մանկավարժական համալսարան, սկսեցի աստիճանաբար գիտակցել, որ իմ ընտրությունը պատահական չէր: Հասկանում էի, որ ուսուցչի աշխատանքը միայն գիտելիք փոխանցելը չէ. դա ավելի լայն ու կարևոր առաքելություն է՝ սերունդների կրթություն, նրանց տրամաբանական մտածողության, վերլուծական ունակությունների և արժեքային համակարգի ձևավորում:

Իմ որոշման վրա մեծ ազդեցություն են ունեցել ծնողներս և հարազատներս: Մայրիկս ևս մանկավարժ է, իսկ մորեղբորս կինը՝ մաթեմատիկայի ուսուցչուհի: Նրանց խորհուրդներն ու աջակցությունն ինձ համար առանցքային նշանակություն ունեցան մասնագիտությանս ընտրության հարցում: Բացի այդ, ես ինքս սկսեցի հասկանալ, որ որակյալ մանկավարժների կարիքը մեծ է, հատկապես՝ մաթեմատիկայի բնագավառում: Ու եթե ես կարող եմ իմ ներդրումն ունենալ այս ոլորտում, ինչո՞ւ չանել դա: Այս գիտակցումն ավելի ամրապնդեց իմ որոշումը:

Այսօր ես լիովին գիտակցում եմ, որ ուսուցչի մասնագիտությունը պարզապես աշխատանք չէ, այլ կոչում, նվիրում ու անսահման սեր դեպի կրթությունն ու գիտելիքը: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն սովորեցնել, այլև սովորել, աճել և ձևավորել ապագան: Ու հիմա, երբ հետ եմ նայում, հասկանում եմ՝ ես ճիշտ ընտրություն եմ կատարել:

Անահիտ ՂԱԶԱՐՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկա-ինֆորմատիկա բաժնի 1-ին կուրս

Ավարտական կուրսում նորովի են իմաստավորվում փորձառությունները

Ես Աստղիկն եմ, սովորում եմ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի 4-րդ կուրսում: Մասնագիտությունը, որը ես ընտրել եմ, շատ հետաքրքիր է, քանի որ աշխարհագրությունը չմշակված խնդիրների բազմաթիվ լուծումներ է տալիս՝ կապված տարածքների զարգացման, բնական ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման հետ: Այդ ամենը անհամեմատելի մեծ դեր ունի մարդու կյանքում ու զարգացման մեջ:

Այս բաժնում սովորելը հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել երկրաբանության, կլիմայական փոփոխությունների, ինչպես նաև մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա: Իմ ուսանողական ճանապարհը լի է նոր բացահայտումներով և անհավատալի փորձառություններով, նպատակս՝ խորացնել իմ գիտելիքները, համատեղել դրանք պրակտիկ գործունեության հետ:

Մանկավարժի մասնագիտությունն անչափ կարևոր ու պատասխանատու աշխատանք է, որի հիմքում ոչ միայն գիտելիքների փոխանցումն է, այլև կրթական արժեքների ձևավորումը: Ուստի, ես բարձր եմ գնահատում մանկավարժի որակավորումը՝ հասկանալով, որ այն տևական կրթական ուղու և պատրաստության արդյունք է: Մանկավարժը պետք է ունենա ոչ միայն խոր մասնագիտական գիտելիքներ, այլև լավ զարգացած հաղորդակցման և մարդասիրական հատկանիշներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կերպով մոտենալ յուրաքանչյուր ուսանողի:

Մանկավարժի որակավորումը գնահատելը կարևոր է: Երբ ուսուցիչը ունենում է բարձր մասնագիտական մակարդակ, նրա դասավանդած նյութը դառնում է ավելի հասանելի, հետաքրքիր և արդյունավետ: Նա կարող է համագործակցել աշակերտների հետ, ստեղծելով այնպիսի մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր աշակերտ կզգա անհատական ուշադրություն և աջակցություն:

Բարձր որակավորումն ուսուցչին հնարավորություն է տալիս հաջողությամբ իրականացնել իր հիմնական գործառույթները՝ օգնելով աշակերտներին հասնել ուսման բարձր արդյունքների, ինքնուրույն մտածողություն ունենալ:

Լինելով ավարտական կուրսում՝ ես վայելում եմ համալսարանական յուրաքանչյուր օրը, քանի որ հասկանում եմ, թե որքան կարևոր են այս վերջին տարիները իմ կրթական ուղու համար: Այս փուլում արդեն զգում եմ, որ ուսման ողջ ընթացքում կուտակած գիտելիքներս և հմտություններն ու փորձը, որոնք ձեռք եմ բերել, պատրաստում են ինձ՝ իրական աշխարհում ինքնուրույն քայլեր կատարելու: Ավարտական կուրսում լինելը նաև մի տեսակ հեռավորության զգացողություն է առաջացնում՝ միաժամանակ կյանքի հաջորդ փուլին պատրաստվելու անհանգիստ ու խթանող սպասումով:

Համալսարանական օրերն այլևս վերածվել են իրար հաջորդող փորձառությունների ու հնարավորությունների շարանի՝ սկսած տարբեր դասերից մինչև անհատական նախագծերի ու խմբային աշխատանքների միջոցով ձեռք բերված նոր գիտելիքներ: Այս փուլում յուրաքանչյուր հանդիպում, դաս, քննարկում, նույնիսկ դժվարություններն ու մարտահրավերներն ունեն իրենց նշանակությունը, քանի որ դրանք պատրաստում են ինձ ապագայի համար:

Միևնույն ժամանակ, ավարտական կուրսում ուսումնասիրություններն ու փորձառությունները իմաստավորվում են՝ հատկապես երբ գիտակցում եմ, որ դրանցով ոչ միայն դառնալու եմ մասնագետ, այլև ձևավորելու եմ իմ ապագան՝ իմ ընտրած ոլորտում: Այս ընթացքում վայելում եմ այն բոլոր հնարավորությունները, որոնք տալիս է համալսարանական կյանքը, քանի որ մոտենում եմ մի նշանակալի նպատակակետի, որտեղ շարունակելու եմ աճել ու զարգանալ:

Սիրում եմ Ուսանողական խորհրդը, քանի որ այն լայն հնարավորությունների սկիզբ է, որը թույլ է տալիս զարգացնել իմ խոհացանկը, ճանաչել նոր մարդկանց և ստեղծել արժեքավոր կապեր: Ուսանողական խորհուրդը, լինելով համալսարանական կյանքի կարևոր մաս, ստեղծում է այնպիսի միջավայր, որտեղ կարող եմ ակտիվորեն ներգրավվել տարբեր միջոցառումների, նախաձեռնությունների և նախագծերի կազմակերպման մեջ: Այս գործունեությունն ինձ տալիս է մի շարք կարևոր հմտություններ՝ պատասխանատվություն, ղեկավարում, կազմակերպչական աշխատանք, թիմում համագործակցություն և ընդհանուր գործերի կառավարման կարողություններ:

Ուսանողական խորհուրդը, լինելով ուսանողական համայնքի մի մաս, բացում է դռներ այնպիսի հնարավորությունների առաջ, որոնք չեն սահմանափակվում միայն ակադեմիական ոլորտով: Դա նաև հնարավորություն է տալու մասնակցել համալսարանական կյանքը ձևավորող նախաձեռնությունների, այդ թվում՝ սոցիալական, մշակութային և կրթական ծրագրերի իրականացմանը: Մասնակցելով խորհրդի գործունեությանը՝ ես ոչ միայն ամրապնդում եմ իմ մասնագիտական կողմերը, այլև սերտում եմ այնպիսի արժեքներ, որոնք կարևոր են ամենահաջողակ առաջնորդի համար՝ հասարակական ակտիվություն, մտավոր զարգացման ու թիմային աշխատանք:

Ավելին, Ուսանողական խորհուրդը նաև ձևավորում է այնպիսի միջավայր, որտեղ կարող եմ բացահայտել իմ հետաքրքրությունները, փորձարկել նոր գաղափարներ և ստանալ իրական փորձ, որն անչափ կարևոր կլինի ապագայի աշխատանքի շուկայում: Սա ոչ միայն բարձացնում է իմ գիտելիքներն ու հմտությունները, այլև ոգեշնչում է՝ զարգացնելու առաջընթացի համար անհրաժեշտ հավատն ու վստահությունը:

Աստղիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի 4-րդ կուրս

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ

Հայապահպանության դասեր

Փետրվարին ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցը հագեցած էր հերթական բաց դասերով՝ նվիրված Գիրք նվիրելու միջազգային օրվան (աշխարհում նշվում է փետրվարի 14-ին, իսկ Հայաստանում՝ փետրվարի 19-ին՝ նվիրված հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան) և Մայրենի լեզվի միջազգային օր (հաստատվել է 1999 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից և նշվում է փետրվարի 21-ին, իսկ Հայաստանում պետական մակարդակով՝ 2006 թվականից):

Այս դասերի շրջանակներում պատմական մի յուրահատուկ էքսկուրս կատարվեց Մաշտոցի ոսկեդարյան ժամանակաշրջանից մինչև հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի լուսավորչական գործունեությունը, խոսվեց հայ գրականության անկյունաքարերի մասին, մասնավորապես վիպագիրներ Ռաֆֆի, Մուրացան, Դ. Դեմիրճյան…

Յուրօրինակ ձևով ներկայացվեց հայ բանաստեղծների քնարերգությունը: Այս դասերն առավել հատկանշական էին ծնողների համար, որոնք հնարավորություն ունեցան իրենց զավակների հետ ընթերցել հայ մեծ բանաստեղծների՝ Հ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի և Վ. Տերյանի, Պ. Սևակի և Ս. Կապուտիկյանի, Հ. Սահյանի և Ն. Զարյանի բանաստեղծությունները՝ նվիրված հայոց լեզվին, հայրենիքին, հայապահպանությանը:

Անդրադարձ եղավ նաև այն երգերին, որոնք տարբեր ժամանակներում գրվել են մեծ վարպետների խոսքերով և ակամայից դիպչում են յուրաքանչյուր հայի հոգու ելևէջներին: Անհնար է պատկերացնել որևէ միջոցառում առանց Կոմիտասի ու Հ. Թումանյանի «Կաքավիկի», Պ. Սևակի ու Էդ. Հովհաննիսյանի «Էրեբունի-Երևանի», Սարմենի ու Ռ. Ամիրխանյանի «Հայի աչքերի» և, իհարկե, առանց ՀՀ օրհներգի, գրված Բ.Կանաչյանի կողմից մեծանուն բանաստեղծ Մ. Նալբանդյանի խոսքերի հիման վրա:

Հատկանշական է, որ հայկական հիմնի հեղինակը, ինչպես նաև հայ մտավորականներ Ս. Շահազիզը, Մ. Էմինը, Վ. Տերյանը, Ալ. Մյասնիկյանը եղել են Լազարյան ճեմարանի տարբեր տարիների շրջանավարտներ և հետագայում դարձել հայտնի գրողներ, արևելագետներ, հասարակական գործիչներ:

Ի դեպ, Ալ. Պուշկինը, Ալ. Գրիբայեդովը, Լև Տոլստոյը, Կ. Ստանիսլավսկին, Իվ. Տուրգենևը նույնպես եղել են Լազարյան ճեմարանում (ներկայումս ՌԴ-ում ՀՀ դեսպանության շենքում): Ուստի դպրոցի սաները շատ լավ պատկերացնում են, որ այսօր միգուցե նստում են այն տեղը, սովորում են այն դասասենյակներում, որտեղ նախկինում եղել են երկու ազգերի մեծ հանճարները:

Այս փոքր ճամփորդությունը հայ գրականության սաղարթախիտ էջերով հիացրեց թե՛ դպրոցի սաներին, թե՛ նրանց ծնողներին, որոնց մի մասը վերապրեց դպրոցական տարիների գրականության դասերը մայր հայրենիքում:

Ծնողները օտար հողում վերարժևորեցին մեծ վարպետների խոսքերը և հիմա զգում են պատասխանատվության զգացում իրենց զավակների առջև: Ուստի դահլիճում և դասարաններում տիրում էր հուզական մթնոլորտ, մերթընդմերթ՝ խորը լռություն: Լուռ էին նույնիսկ ամենափոքրիկ սաները, երևի թե մտորում էին իրենց մաքուր հոգու ջինջ աշխարհում:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար մարտի 4-ին Մանկավարժական համալսարանում դասախոսություններով հանդես եկավ կենսաբանական գիտությունների թեկնածու Արևիկ Մինասյանը (Founder of X Theory): Նա ներկայացրեց «Խելացի սնունդը որպես երկարակեցության գրավական», «Ապագա թվային հեղափոխությունն այստեղ է. ինչպես հաջողության հասնել Linkedin-ի հետ» թեմաները:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Սիրինե Շողերյանը ներկայացրեց բանախոսին և նրա մասնագիտական գործունեության ոլորտները, մի շարք համալսարաններում դասավանդելու շարժընթացը (Լայբնից-Քաղցրահամ ջրերի էկոլոգիայի և ներքին ձկնաբուծության ինստիտուտ, Բեռլին, Գերմանիա, Հելմհոլցի շրջակա միջավայրի հետազոտությունների կենտրոն, Լայպցիգ, Գերմանիա, EAWAG, Շվեյցարիայի ջրային գիտության և տեխնոլոգիաների դաշնային ինստիտուտ, Դյուբենդորֆ, Շվեյցարիա, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլյան համալսարան, Ինսբրուկի համալսարան, Ավստրիա, Օբերնի համալսարան, ԱՄՆ, UCSD - Կալիֆորնիայի համալսարան, Սան Դիեգո):

ԵՊՀ-ի կենսաբանության բաժնի շրջանավարտ Արևիկ Մինասյանը, որ ապրում է Մայամիում, արտերկրում գործունեություն ծավալում, ասաց, որ իր դասախոսության նպատակը գիտելիք հաղորդելը չէ, այլ օգնել պրակտիկայում ինչպես կիրառել գիտելիքը:

Արևիկ Մինասյանի առաջին դասախոսությունը վերաբերում էր մարդու երկարակեցության հնարավորության բացահայտմանը, երկրորդ դասախոսության նպատակն էր՝ փորձել օգնել մարդկանց, որ նրանք լինեն ոչ թե սոսկ սոցցանցերի օգտագործող, այլ օգտվել դրանք ստեղծելու մերօրյա հնարավորություններից. խոսքը վերաբերում էր Linkedin առաջատար բիզնես հարթակին:

Մասնագիտությամբ կենսաբան Արևիկը նաև սովորել է արտերկրում, վերապատրաստվել տարբեր մասնագիտական ուղղություններով, երկար տարիներ աշխատել է Եվրոպայում և Ամերիկայում:

Այսօր մարդու կյանքի միջին տևողությունը 70-75 է, մինչդեռ գիտնականները պնդում են, որ մարդը կարող է ապրել 150 տարի, միայն թե նա պետք է ճշտորեն հետևի երկարակեցության 4 ֆորմուլային՝ ֆիզիկական ծանրաբեռնվածություն, մտավոր աշխատանք, ճիշտ սննդակարգ և սթրեսի կառավարում:

Արևիկ Մինասյանի ներկայացրած աշխարհի գիտնականների պնդումները մեծ աշխուժություն առաջացրին դահլիճում ներկա գտնվողների շրջանում՝ սթրեսը բերում է ներքին բորբոքումների, կառավարվող սթրեսներն օգտակար

են, ինչու և ինչպես պահպանել ցողունային բջիջները, եթե ներբջջային կառուցվածքը շատ է փոխվում, բջիջներն այլևս չեն կարողանում պայքարել, սննդային վտանգը մինիմալի հասցնելու անհրաժեշտությունը, երջանկության ֆորմուլան՝ սթրեսադիմացկունության դիապազոնի օգտագործմամբ հաճույք ստանալն է, աշխարհում չկան գենետիկ հիվանդություններ և այլն:

Բանախոսն ակտիվ երկխոսության մեջ մտավ լսարանում ներկա գտնվողների հետ, պատասխանեց նրանց հարցերին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում Վրեժ Միքայելյանի հետ

Ուսանողական գիտական ընկերությունը նախաձեռնել է սեմինար-քննարկումների շարք: Հերթական նախաձեռնությունը «Թվային մարդը» հանդիպումն էր: Մանկավարժական համալսարանում էր «Բազումք» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայի ինժեներ, «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների աշխատակից Վրեժ Միքայելյանը:

«Արհեստական բանականությունը կրթության և գիտության ոլորտում» թեմայով ինտերակտիվ հանդիպման ընթացքում բանախոսն անդրադարձավ համակարգի գործածմանը, խոսեց դրա առաջարկած հնարավորությունների և առավելությունների մասին:

Հավելենք, որ Վրեժ Միքայելյանը մասնակցել է 2022 թվականին «Հայասաթ-1» հայրենական առաջին տիեզերական արբանյակի ստեղծմանը, ինչի մասին ևս խոսեց ուսանողների հետ՝ ներկայացնելով արբանյակի՝ տիեզերք արձակելու երկար սպասված իրադարձությունը:

Ներկաները հանդիպման ընթացքում խոսեցին արհեստական բանականության կարևորության ու տիեզերքում նրա կիրառման մասին: Վրեժ Միքայելյանն էլ ներկայացրեց տիեզերական արբանյակի գործածումը հետագա արբանյակների նախագծման փուլում, այլ տարածքներում կյանքներ փնտրելու և ուսումնասիրությունների շրջանակում:

Լույս է տեսել

Լույս է տեսել Չուբարյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածուն, որի առաջաբանի հեղինակը և մասնագիտական խմբագիրը Գագիկ Սուքիասյանն է:

Ժողովածուն ընդգրկում է կրթության, գիտության և գործնական ոլորտներին վերաբերող կարևոր հարցեր՝ կապված գրադարանագիտության, մատենագիտության ու գրքագիտության ժամանակակից զարգացումների հետ:

Հոդվածների ժողովածուն նախատեսված է «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի դասախոսների, ուսանողների, ինչպես նաև գրադարանային գործով, մատենագիտությամբ, գրքի («փաստաթղթի») պատմությամբ ու մշակույթի հարցերով զբաղվող մասնագետների համար՝ Հայաստանում և Սփյուռքում:

Ժողովածուն կարող է օգտակար աղբյուր հանդիսանալ նաև տեղեկատվական,



սոցիալ-հաղորդակցական, ընթերցողների գրադարանային սպասարկման ու մանկավարժահոգեբանական նոր ուսումնասիրությունների համար:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ